№ 19 ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍ 27 — 1895 — ԹԻՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍ 27 № 19

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փոխի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չէ 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՀԱԳՈՅԺ

Պ. Մկրտիչ Յ. Գուլզադեանի բարեկամները և ազգականները յայտնում են իրենց խորին ցաւակցութիւնը Բուլղարից այն կորուստի համար, որ նա ունեցել է յանձին իւր բազում սիրելի Թովմաս անուն որդւոյն, որ իւր տասն և իններորդ ծաղկեալ հասակում լընթաց երեք աւուր յանկարծ տկարութեան՝ զրաւեալ է՝ի կենաց հինգշաբաթ օրն մայիսի երկսին, իւր սաստիկ տրամեալ ծնողաց՝, ընտանեացն և համայն բարեկամաց խորին սգի և տրխրութեան մէջ թողնելով։ Հանգուցեալն իւր խոհեմ, խոնարհ և քաղցր բնաւորութեամբն՝ բոլորին սիրելի էր՝ և ամբողջ Բուլղարայ թէ հայ՝ թէ անգլիացի և թէ պարսիկ հասարակութեան համակրութիւնն լիովին կը վայելէր. նրա յուղարկաւորութեան հանդէսը կատարւել է մեծ շքով. տեղական կառավարութիւնը իւր համակրութիւնը և ցաւակցութիւնը յայտնելով հանգուցելոյ ընտանեացն երեք հատ եաղակ, բալաբանջիք և քսանեակ հետեւող զօրքեր առաքելով, որ դագաղին կընկերակցէին հոծ բազմութեամբ՝ քաղաքացոց՝ պարսից, հայոց և եւրոպայւոց ի տանէ հանգուցելոյն՝ մինչ հայոց եկեղեցին, ուր ամփոփեցաւ հանգուցեալն։ Հանգուցելոյն և նրա հօր բարեկամները հրապարակաւ յայտնում են Գուլզադեան գերդաստանին իրանց ջերմ համակրութիւնն և խորին ցաւակցութիւնը այդ մեծ կորստի համար, մաղթելով նրանց վերստից մխիթարութիւն։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցների տնտեսական հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կարլ Ֆոխտ. Նամակ Սալմասից. Նամակ Դավրէժից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Կովկասից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անկարգութիւններ Գ. ձեմարանում։

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԸ

IV

Անցեալ համարում ասացինք թէ որպիսի բարերար ազդեցութիւն կունենայ թոշակավճարի սիստեմը կրթական գործի վրայ, նոյն իսկ բարոյական տեսակէտից։ Թող թոշակի սիստեմը դիւի, ըստ ինքեան թոշակի քանակութիւնը թող քիչ լինի, բայց վերացուի այն ձրիական դրութիւնը, որ առաջացնում է վատ հետեւանքներ։

Ուրիշ երկիրներում, օրինակ նոյն իսկ Ռուսաստանում շատ դպրոցներ կան որոնք թոշակավճար չունեն, բայց դրա փոխարէն, ժողովուրդը միւս տուրքերի հետ վճարում է նաև կրթական տուրք և կամ կառավարութիւնն է որ հոգում է դպրոցի ծախքը, անուղղակի տուրքերի եկամուտներից։ Սկզբունքով հարկաւոր է որ կրթութիւնը և ուսումը ձրի տրւի, որ դպրոցի դռները բաց լինեն ամեն ցանկացողի առջև, բայց այդպիսի դէպքում հարկաւոր է որ նախ ընկերական ուրիշ պայմանները փոփոխութեան ենթարկւեն և այդպիսի ընկերական հաստատութիւնների համար հասարակութիւնը որոշ տուրք վճարի, դպրոցը փառաւոր դրութեան մէջ պահելու չափ տուրք։

Հարկաւոր է ուրեմն, մեր հանգամանքների համեմատ, մտցնել պարբերական թոշակավճարի սիստեմը, ծնողների կարողութեանը նայելով. շատ ազքատներին միայն կարելի է ձրի ընդունել, եթէ չը գտնւեց մի հարուստ որ համաձայնուէր նրա համար որոշած թոշակը վճարել։ Լաւ կը լինէր ի հարկէ որ եկեղեցւոյ եկամուտը, մի սկզբնական հիմնական գումարի տոկոսի հետ միացած՝ կարողանար դպրոցի տնտեսական մասը ապահովել, բայց շատ տեղ կարող են եկեղեցու եկամուտները սակաւ լինել և հիմնական գումար ունենալու համար դժուարութիւններ առաջանալ։ Թոշակի սիստեմը կունենայ իր բարերբեր արդիւնքը. նա կը որոշի գոնէ աշարկերտներից առաջացած որոշ մի եկամուտ և միանալով եկեղեցւոյ տուածի, զանազան կտակներից, կալուածներից և նուէրներից պատահաբար եկածների հետ, հոգաբարձութեան կը տայ մի բիւդջէ, և նրան այլ ևս դռնէ դուռ ընկնելու և մուրալու, այդպէս էլ ամէն տարի նորից դրամական տագնապներով տառապելու դրութեան մէջ չի պահիլ։

Թէհրանում դա միայն այն ժամանակ կարելի է դործադրել, երբ փակուի կամ միայն մէկ հոգաբարձութեան տնտեսական հսկողութեան տակը դրւի Դովլաթա թաղի—խալիֆայական, ժողովրդի աչքին թող փչող սպանդանոց—դպրոցը, որովհետև մեր ժողովուրդը դեռ տգէտ լինելով և մանաւանդ շլանալով Գասպարեանի պէս մի—իր անցեալովը անայլայլ, կոշկակարութիւն միայն արած—կեղծաւոր խալիֆայից և նրա արբանեակներից, կը դիմի նորից ձրի սիստեմին, մուրացիկութեան և Հայկազ. դպրոցը կը դատարկւի Դովլաթի թաղում։

Երբ առիթը գայ, մենք աւելի մանրամասնօրէն կը ներկայացնենք մեր ծրագիրը այդ սիստեմը գործադրելու մասին։ Այսքան միայն ասենք այժմ։ Հարկաւոր է նախ որ թոշակի սիստեմը անյապաղ, հէնց եկող տարւանից մտցնւի։ Թէհրանում հարկաւոր է Դովլաթի թաղի թէ տնտեսական և թէ ուսումնական մասը ենթարկել Հայկազ. դպրոցի հոգաբարձութեան և կառավարել նրան Թէհրանի երկու եկեղեցիների թէ կալուածներից և թէ այլ աղբիւրներից գոյացող եկամուտներով և աշակերտների պարբերաբար վճարելիք թոշակով. թող սկզբում այդ թոշակը քիչ լինի, բայց լինի պարբերաբար և մշտական։ Այնուհետև հոգաբարձութիւնը կազատւի մուրալուց, որովհետև նա աչքի առջև ունենալով եկեղեցիների եկամուտները և թոշակները՝ կը հաստատի մի նախահաշիւ, որով էլ կը ղեկավարւի միշտ։

Մնում են պատահական նուէրները, կտակները և այլն։ Դրանք պատահական լինելով, կարող են յատկացւել դպրոցի ներքին պիտոյքների համար։ Ամօթ է, օրինակ որ Թէհրանի դպրոցի պէս մի դպրոց, չունի ոչ մի քարտէզ, ոչ մի գործիք, ոչ մի աշակերտական գրադարանի յարմար գիրք, ուսուցիչների ձեռնարկեր կամ երկրաչափական ձևեր... առարկաներ, որոնք ամենաանհրաժեշտ բաներ են մի տարրական դպրոցի համար իսկ... այդ պատահական նուէրները կարելի կը լինի յատկացնել քարտէզներ ֆիզիքական մի քանի գործիքներ, կենդանաբանական, բուսաբանական, գծագրական և այլն պատկերներ գնելու, դպրոցի շէնքը նորոգելու և այլ մանր ծախսերի համար, որոնցից ամեն տարի դպրոցները պէտք են ունենում։

Մենք առայժմ, վերջացրինք մեր ասելիքը, տալով համառօտ խօսքերով մեր դպրոցների տնտեսական խնդրի լուծման համար ինչ որ մենք մտածում էինք։

Ամփոփենք։ Դպրոցների տնտեսական հարցը կրթական գործի մէջ, ամենաառաջին հարցն է, որի մասին հարկաւոր է մտածել։ Եկեղեցւոյ եկամուտները և աշակերտական թոշակները ներկայանում են դպրոցի տնտեսական երկու ամենալաւ և հաստատ աղբիւրները։ Օգտւենք նրանցից։ Մուրացկանութիւնով դպրոց պահել չէ կարելի և ոչ էլ ժողովրդին զզւեցնել զանազան հանգանակութիւններով։ Եկեղեցւոյ եկամուտները ուրիշ ոչ մի բանի չը պիտի գործադրւեն և ծնողները, եթէ կամենում են որ իրենց որդիները կրթւին, ուսանեն, պարտաւոր են պարբերաբար տուրք վճարել։ Այն ժամանակ նրանք չեն նայիլ դպրոցի վրայ՝ որպէս իրենց չար արդարներին ուղղակելու տեղի վրայ. այն ժամանակ նրանք կը հետաքրքրւեն, հաշիւ կը պահանջեն դպրոցները ղեկավարողներից և այլ ևս չեն շլանալ զանազան կրթական շառլատանների փչած ոսկեզօծ թոզից և թոյլ տալ որ զանազան խալիֆաներ՝ ապականեն իրենց մանուկների բարքն ու միտքը։.

Մենք ասացինք. թող խօսի, դատի, ով կարող է. հարցը հրապարակի վրայ ենք ձգում և հարկաւոր է նրան շուտափոյթ լուծում տալ, քանի դեռ ուսումները չեն վերսկսել։ Վերջ դնենք մուրացող դպրոցների, վերջ դնենք և ոչնչացնենք եկեղեցու եկամուտները կլանողներին, վանդենք՝ դպրոցների մէջ շնորհիւ ձրիութեան բուն դրած կրթական շառլատաններին, որոնք զանազան շլացուցիչ ներկերով աշխատում են ըստպարել իրենց վիրալից դէմքերը, պպականելով մեր ապագայ սերունդը։

Այդ բոլորը կանւի այն ժամանակ միայն երբ դպրոցը կունենայ որոշ, հաստատ, պարբերական եկամուտներ, մի բիւդջէ. երբ ծնողները վճարելով ուսման ծախս, կը հետաքրքրւին տրւած ուսումովը, իրենց մանուկների կրթութեան գործով և լրջութեամբ կը վերաբերւեն դէպի այդ կարևոր գործը։

Ա. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ՖՈԽՏ

Մի շատ տխուր հեռագիր լուր բերեց, որ ծրնէվում, ապրիլ 25-ին վախճանվել է հռչակաւոր երկրաբան և կենդանաբան Կարլ Ֆոխտը։

Կարլ Ֆոխտը Գերմանիայի Գիսէն քաղաքից էր, ծնւած 1817 թւին։ Նա 78 տարեկան էր, բայց դեռ ժիր, դեռ աշխատող. դեռ նա շարունակում էր իր աշակերտ պրոֆ. Էմիլ Ունկի օգնութեամբ մի մեծ «Համեմատական անատոմիայի» վրայ, որ Ֆոխտի գլխաւոր աշխատութիւնն էր լինելու։ Ֆոխտը կարող էր տիպար լինել աշխատութեան. նա մինչև իր կեանքի վերջը, ծրնէվի համալսարանի կենդանաբանութեան պրոֆեսսոր մնաց և կենդանաբանական

լաբորատորիայի կառավարիչը. դասախօսում էր դեռ և շատ հայ ուսանողներ բախտ են ունեցել նրա հիացուցիչ դասախօսութիւնները լսելու։ Նա ունի նաև հայ աշակերտներ, որոնք աշխատել են նրա ձեռքի տակ։

Կարլ Ֆոխտը յայտնի էր ոչ միայն իբր գիտնական, այլ և իբր նշանաւոր գրող և Դարվինիզմի յայտնի պաշտպաններից մէկը Գերմանիայում, պրոֆ. Հիկկելի հետ։ Նրա գրուածքներից յայտնի է «Lettres physiologigues»-ը որոնք գրուած են ժողովրդի համար։ 1847 թուականների Գերմանիայում եղած շարժումների ժամանակ Կարլ Ֆոխտը, գրաւիչ հռետոր և աշխոյժ ագիտատոր, ազդու ճառերով յուզում էր ամբողջ Գերմանիան. ընտրուեց պարլամենտի անդամ բայց իր ազատամիտ գաղափարների համար ոչ միայն զրկեցին նրան պաշտօններից, այլև ստիպեցին հայրենիքից հեռանալ և մինչև իր կեանքի վերջը անցկացնել Շվէյցարիայում, ուր և նա մեռաւ։

Կարլ Ֆոխտը մեծ ծառայութիւններ է արել գիտութեանը, մանաւանդ երկրաբանութեան համար. գիտական աշխարհը վաղուց է արդէն որ շատ լաւ ճանաչում և յարգում էր նրան և չը կայ մի փոքր ի շատէ զարգացած մարդ որ չափսոսայ նրա մահը, որովհետև պատկառելի գիտնականը իր 78 տարեկան հասակում իսկ ներկայանում էր Ժընէվի համալսարանի ամենալաւ պրոֆէսսորներից մէկը և գիտական գրականութեան փայլուն աստղերի մէջ իր պատուաւոր տեղն ունէր։ Նա գործելով, աշխատելով մեռաւ։ Քաջ զինուորի պէս կանգնած մեռաւ։ Թող օրհնութեամբ և երախտագիտութեամբ լինի նրա յիշատակը։

Վ. Փ.

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

—

24 ապրիլ 95

Սալմաստը ոչ մի ժամանակ չէ եղել այնպէս բաղդաւոր ինչպէս այժմ։ Ճատերը կը հետաքրքրուեն թէ ինչումն է կայանում այդ բաղդաւորութիւնը. սպասեցէք ասեմ. չորս գառնազգեստ գայլեր միանգամից միասին պատահել են Սալմաստում. երևակայեցէք որքան մեծ բան։ Արսէն աբեղան բաւական չէր Սալմաստը աւերելու և ահա երեքն էլ դարձեալ ուելացան. ուրեմն ինչ կը լինի սալմաստցու դրութիւնը։

Սրանցից առաջինը՝ Մաքուի Եսայի վարդապետն է. երկրորդը՝ ղարաբաղցի Խաչիկ վարդապետը. երրորդը՝ թեմիս վիճակաւոր առաջնորդի ապագայ փոխանորդ Սարաջեանը, որովհետև սրբազանը մայիսի վերջին հեռանալու է (բարով գնայ), չորրորդը մեր հանրածանօթ Արսէն աբեղայ Վեհունին. ինչ միմեանց բռնել են։

Անցեալ օրերումս այդ «չորրորդութիւնը» լուր է տարածել Սալմաստի ամբողջ գիւղերում, թէ «վաղը ս. Թադէոս եկեղեցում (մի փոքր եկեղեցի է Հաֆթվան և Փայաջուկ գիւղերի մէջ տեղում) պատարագ է լինելու և ս. Թադէոսի տօնը տօնելու են, չը նայելով որ այդ օրը ոչ ս. Թադէոսի տօնի օրն էր և ոչ մի այլ սրբի, այլ քահանաներ լցնելու օրն էր, որովհետև այդպիսի տեղում ժողովուրդը չէ խնայում։

Մի և նոյն օրը այդ «չորրորդութիւնը» վերադառնում է Հաֆթվան։ Ղարաբաղցի Խաչիկ վարդապետը թէ որտեղից է իմանում, որ Հաֆթվանի եկեղեցում հին ձեռագիր գրքեր կան, մօտաւորապէս հազար, հազար հինգ հարիւր տարեան (?), և ահա կանչելով երեցփոխին միասին գնում են եկեղեցի և ընկնում այս և այն կողմ. գրքեր, կամ աւելի ճիշտն ասած, արժէք ունեցող ինչ որ պատահում է հաւաքում բերում են առաջնորդարան, իբր թէ մը տիկ տալու համար. իսկզ երեցփոխը ինչ է կարծում որ գրքերը կամ միւս իրեղէնները այնպէս տեղ ընկան որ յետ ստանալը բաղդաւորութիւն պէտք է համարել։ Միւս օրը երեցփոխիը գնում է գրքերն է պահանջում, բայց գրքերի փոխարէն ստանում է հետևեալ պատասխանը. «Այդ գրքերը Հայրիկը պահանջել է պէտք է տանենք Էջմիածին.» Խեղճ մարդը լսածին չէ հաւատում, իսկոյն դէպքը յայտնում է հոգաբարձութեան. հոգաբարձուները նամակով են պահանջում գրքերը և իրեղէնները, բայց նրանց փոխարէն դարձեալ ստանում են բացասական պատասխան բերանացի, ոչ թէ առաջուայ նման այլ «չենք տալիս, ինչ որ կամենում էք արէք»։ Սմեն կողմից ճարները կտրած յուսահատ սպասում են։ Վերջապէս այդ լուրը տարածվում է ամբողջ գիւղում. ժողովուրդը հաւաքվում է առաջնորդարանի բակը և սկսում սպառնալիքներ կարդալ վարդապետների գլխին, բայց ուր «ինչ էք ցանել ինչ էք քաղում». ով կը յաղթի նրանց. չորս վարդապետները, (որոնց թւումը պէտք է հաշուել նաև հրաժարեցրած սեսուշ Մ. Աւետիսեանը) այնքան սպասում են, որ մինչև ժողովուրդը հանդարտվում է և յետոյ բաց են անում առաջնորդարանի դռները, հոգաբարձուներից մի քանիսին կանչում և ասում են, ինչպէս կասեն «փոփուկ երակներից բռնել», «թէ ժողովուրդը չէ հասկանում, միթէ կարելի է հոգևորականին անպատուել, մենք այնպիսի մարդիկ չենք որ գրքերը տանենք. միայն մեր նպատակը նա է որ անունները և թւերը արտագրենք ուղարկենք Էջմիածին, իսկ մենք որ ասացինք չենք տայ նրա համար որ չը կարողացանք համբերել. գրքերը կրկին կը վերադարձնենք ձեզ» և ուրիշ շատ բաներ. բայց գրքերը մինչև այժմ մնում են և յուսալի է որ կը մնան։

Ֆլա.

ՆԱՄԱԿ ԴԱՒՐԷԺԻՑ

—

14 մայիսի 95

Վերջապէս... Հազիւ-հազ Ատրպատականի հայոց առաջնորդը իր շնորհը Դավրէժից պակասացնել բարեհաճեց։ Առաջնորդական փոխանորդ նշանակուել է Յովսէփ վարդ. Սարաջեանը. այն Սարաջեանը՝ որի «խելքին շատ է հաւանել մի հիւպատոս...»

Կարիքոր ենք համարում «Շաւիղի» էջերում արձանագրել մի վերին աստիճանի ազգեղ փաստ, որը սակայն միանգամայն բնորոշ է Դավրէժի՝ թէ հասարակութեան և թէ նոյն այդ հասարակութեան վիժմունք «երիտասարդ» համարուած տարրերին...

Որ Դավրէժի հայ հասարակութեան իւրաքանչիւր խաւերում անվերջ իրաւացի դժգոհութիւններ ու տրտունջներ էին լսվում ընդդէմ առաջնորդի գործունէութեան—դա մի անհերքելի փաստ է։—Ապացոյցներ ձեզ չհասը հասցնելու համար ոտացուած 90 և 50 թուումանները, ապացոյց ձեզ քառորդ դիւժին տըգէտ տիրացուների քահանայեցնելը, ապացոյց ձեզ թէ Կովկասի թերթերում թէ «Շաւիղի» էջերում տպագրուած անվերջ բողոքները և վերջապէս... Դավրէժի հասարակութեան անվերջ տըրտունջները.... Եւ այդ բոլորից յետոյ... ինչ անուն տալ Դավրէժի այն մի խումբ ազաներին, «ջահիլ-աղա-երիտասարդներին», իրենց բարձր կոչումը չը հասկացող ուսուցիչներին, որոնք ստրկի շողոքորթութեամբ, Պարզեանի հեռանալու օրը խմբուել էին առաջնորդարան խնդրում-աղերսում էին, որ Պարզեանը չը բարեհաճի հեռանալ Դավրէժից...

Մենք խօսք չենք գտնում, այդպիսիների վարմունքին արժանաւոր անուն տալու...

Եւ իրաւ. ինչ կը նշանակի... քանի դեռ Պարզեանը չէր հեռացել, ամեն տեղից դժգոհութիւն, տրտունջ էր, շուալում էր Պարզեանի հասցէին, թէ վաճառականների, թէ «երիտասարդների,» թէ ուսուցիչների, թէ գործակատարների կողմից... և յանկարծ, նոյն այդ բողոքող թայֆան—որոնց անունը հարկ եղած ժամանակը երևան կը հանենք—Պարզեանի փէշերն է ճղում, որպէս զի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

—

1894 թւի մայիսի 2-ն էր, մի գեղեցիկ գարնանային առաւօտ, վանքի բակով անցան 22 ուսանողներ դէպի վեհարան—Կաթուղիկոսից վերջին ունկնդրութիւն խնդրելով, նրանք ընդունեցին.—Ծաղկեայ դահլիճի մէջ տեղը մի մեծ գրասեղանի առաջ նստած էր հայոց Հայրիկը ընկղմած ծխախոտի թունդ ծխի մէջ, շրջապատած հարիւրաւոր խնդրագրերի դէզերով, ինչ որ գիրք էր թերթում, երբ մենք ներս մտանք և աջն առնելով, սեղանի առաջ կիսաշրջան կազմեցինք. նա հեգնաբար աչքերը մեզ դարձրեց և սառն տոնով արտասանեց հետևեալը։

Հեռու, հեռու կայնեցէք ըմբոստներ (մենք դահլիճի մի խոր անկիւնը քաշուեցինք), հա, եկել էք հրաժեշտ տալ, գացէք, Աստուած ձեզ հետ. որչափ ուսում առաք բաւ է, բարձր ուսումը մարդս կը թշուառացնէ, հիմա հացի դար է, ամեն մարդ հաց կը փնտռէ, գացէք դուք ալ ձեր հացի յետևէն։

Կարծես սառը ջուր ածեցին գլխներիս. ինչպէս, միթէ սա այն մարդը չէ, որ դեռ ոչ շատ առա իր հոռոմ և ճարճատուն ճառերով մեզ գործի էր հրաւիրում, գաղափարական գործին ծառայել, լինել լաւ հոգևորականներ, ուսուցիչներ և այդպիսով կատարած հանդիսանալ այն բոլոր պարտականութիւնները, որ մեր վրայ դրել է մեր բարերարը, իրագործել ազգի յոյսերը, ծառայել մատաղ սերնդի կրթութեան գործին. Նա շարունակեց իր խօսակցութիւնը. որի մէջ մեզ մեղադրում էր թէ իբր մենք անկարգութեամբ ենք շարժուել այս գործում, որ մենք ուղղակի իրեն չը պէտք է դիմէինք խնդիրքով, այլ իր կամանած վարչական մարմիններին, ինչպէս տեսչին. այստեղ մենք հանգամանքից օգտուելով պատասխանեցինք թէ տեսուչ չունենք. «Ի՞նչպէս, պատասխանեց նա, հապա Սարգիս սրբազանը».—Սարգիս սրբազանը, ասացինք մենք, նախ մեզ համար տեսչութիւն չէր անում և երկրորդ նա տգէտին մէկն է, ոչինչ չէ հասկանում... «Ի՞նչ կրսէք, սակայն նա եպիսկոպոս է...»—Եպիսկոպոսութիւնը դեռ գրաւական չէ, որ նա կարող է լաւ տեսուչ լինել... Նա բարձրացաւ և հրամայեց այդ մասին ալ խօսք չընել և իբր իր քաղցր վարդապետութեան յիշատակ մէկ մէկ հատ «Պապիկ և Թոռնիկ» նուիրելով, մեզ ճանրեց։ Վերջապէս դուրս եկանք վեհարանից և վերջին անգամ ջերմ համբոյր դրօշմելով մեր հանգուցեալ բարերարի անշուք շիրմին, և վկայ կանչելով նրան տիրող բաշիբոզուկ կանոնների տիրապետութեան, հեռացանք։

Մենք հէնց առաջ էլ յոյս չունէինք վերջին տեսութեան ժամանակ մեր վշտերը պատմել ուստի հէնց առաջուց պատրաստել էինք մի զեկուցումն, որ և բաժանելու բոլէին ներկայացրինք իրեն. այդ զեկուցումից մէկ-մէկ օրինակ տուել ենք նաև մի քանի բարձրաստիճան հոգևորականների, ինչպէս և ուղարկել ենք մի քանի լրագրութիւնների խմբագրութիւնների, բայց այդ զեկուցումը չը հրապարակվեց։ Սարգիս եպիսկոպոսը իր գարշ վարմունքը ցոյց տուեց նոյն իսկ ամենավերջին բոլէին, երբ ուսանողները ստանում էին իրենց վկայականները և գուրս գալիս ճեմարանից։

Այսպէս նա հրաժարուեց երկու ուսանողների վկայականներին ստորագրել, որովհետև... «Բա ընչու նրանք ինձ էշ են ասել, ով ուղում ա թող ստորագրի...» Երբ պ. Սաղաթելեանը (տեսչի օգնականը) յանձն առաւ ստորագրել, եպիսկոպոսը զիջաւ և ինքը ստորագրեց։ Մէկ ուսանող ստանալով իր վկայագիրը մի քանի յուրտ խօսքեր ուղղեց եպիսկոպոսի երեսին, մի քանի ուսուցիչների ներկայութեամբ. նա տեղից վեր ցատկեց, վրա վազեց, բայց ուսանողը արդէն չը կար։

Ամենավերջին ուսանողը նոյնպէս մի երկու խօսք ասաց. «սրբազան հայր, մենք գնում ենք կոտրուած սրտով և վատ յիշատակներ տանելով. դուք ձեր տգիտութեամբ և կուսակցականութեամբ մեզ դժբաղդացրիք, բայց զգուշացէք ամբողջ ճեմարանը չը դժբաղդացնել...» Եպիսկոպոսը օձից խայթուածի նման վեր թռաւ, խլեց ուսանողի ձեռից վկայագրերը և պատռտելով դէն շպրտեց (բացի իր տուած վկայագրից, նրանց մէջ կային ուրիշ միջնակարգ դպրոցների վկայագիր, ապա ծննդեան ծաղկի և առողջութեան վկայագրեր), բայց դրա համար ինքը տուժեց. նա մի շարաթ հիւանդ պառկեց վախութիւնից, որովհետև վիրաւորուած ուսանողը պատրաստում էր հարկ եղած օրինական միջոցներին դիմել, բայց նրան մի կերպ համոզեցին յետ կենալ դիտաւորութիւնից ստանալ իր նոր վկայագրերը և բաւականանալ միայն կաթուղիկոսի յանդիմանութեամբ։

(Կը շարունակուի)

Պարզեանը մնայ, չը հեռանայ Դավրէժից... մինչև անգամ «Մալթայի էֆէնդին» թոյլ է տուել իրան ասելու... «Որ մենք ձեզնէ գոհ ենք, սրբազան հայը, դժգոհները և լրագրներում գրողները քանի մը օտարական ուսուցիչներ են, անոնք ալ շուտով կը հեռանան ասկից...»

Տողերիս գրողը Դավրէժի բողոքողներից մէկին հարցնում է թէ «ինչու էիք առաջ առաջնորդի դէմ խօսում, իսկ այժմ գնացել էք նրան ճանապարհ ձգելու, նրան պատուոյ ճաշ տալու և այլն...» Նա պատասխանում է բաւական պարզօրէն,—«Բարա՛, չենք ուզում է... չենք ուզում նրան, բայց ա՛խր նա մեր հոգևոր հայրն է... մենք էլ ապրում ենք պարսիկների մէջ... ինչ կասեն պարսիկները, եթէ նրան լաւ ճանապարհ չը ձգենք. չէ՞ որ առաջնորդարանի բարձր պատիւը կընկնի...»

Բացատրութիւններն աւելորդ են։

Նշտար

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մարաղա 4 մայիս 95

Բարեհաճեցէք խնդրեմ մի անկիւն շնորհել հետևեալ երկտողիս ձեր թերթի մօտակայ համարներից մէկում։

Պարտք սեպեցինք մենք ի գիտութիւն ընդհանուրի հերքել «Ջուլֆի» 13-րդ համարում տպած «Դավրէժի հայոց ընկերութիւնները» վերնագրով յօդուածի այն լուրը, աւելի լաւ կը լինի ասել տեղեկագիրը, թէ Դավրէժի «Ընթերցասիրաց գրադարանական» ընկերութիւնը մի ազգատիպ գրադարան ունի պահած Մարաղայում։ Մենք յայտնում ենք հրապարակով, որ այդ ընկերութիւնը ո՛չ միայն մի ազգատիպ գրադարան չունի պահած Մարաղայում, այլ մի կոտոր ամենաաննշան փոքրիկ գիրք անգամ։

Իսկ ինչ վերաբերում է մեր քաղաքի գրադարանի գրքերին, դրանք բոլորն էլ սեփական իրենն են։ Մեր գրադարան-ընթերցարանը այժմ ունի 250 կտոր ընտիր գրքեր,—որոնց 50 կտորը այս ձմեռ Տէր Տաճատ քահանան Դավրէժ գնալիս՝ հաւաքել էր մի քանի անձինքներից,—և 700 դրան կանխիկ փող։ Այնպէս որ, իմ կարծիքով, եթէ մեր այդ գրադարան-ընթերցարանի մատենապահ—տեսչութեան դէկը մի գործունեայ անձի ձեռքումը լինի, կարող է նա մօտ ապագայում մրցել այդ՝ Դավրէժի «Ընթերցասիրաց գրադարանական» ընկերութեան նոյն իսկ Դավրէժում պահած գրադարանի հետ։

Ի դէպ է ասել այստեղ և այն, որ թէև մեր գրադարան-ընթերցարանի վիճակը համեմատաբար նախանձելի կարելի է համարել գրքերի և փողի հարստութեան կողմից, բայց այնուամենայնիւ այսօր նա մասնակ է տարապայման անհոգատարութեան շնորհիւ մեր ցովնան վարժապետի։

Միրզա Մելիք-Սայադեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ներկայ համարում տպած Դավրէժի նամակը հաղորդում է, որ Սուքիաս եպիսկոպոսը արդէն մեկնել է իր թեմից դէպի Օդէսսա ոսկրացաւից բժշկուելու համար։ Սուքիաս եպ. հեռանալը աւելի դան տեղին էր. զարմանում ենք որ մինչև այժմ ուշացել է. ոսկրացաւը այնպիսի հիւանդութիւն է, որ երկար անդարման մնալով կարող է անբուժելի դառնալ, այնպէս, ինչպէս որ ինքը, Սուքիասը, երկար մնալով իր պաշտօնում կարող էր անբուժելի դառնալ Ատրպատականի համար։

—

Դավրէժից մեզ գրում են հետևեալը. «Արամեան գպրոցի ուսուցչական խումբը—արժանաւոր հետևողներ անանուն թերթի—«Նոր-Դարի»—բացի երկուսից՝ գնացել էին սրբազան Պարզեանին իբրենց վերջին շողոքորթական յարգանքը տալու. Լիլաւայի ուսուցչական խումբը փայլում էր իր բացակայութեամբ, բացի Լիլաւայի տիրացու այլև նորակառոյց գպրոցի ինժէնէրը, որը ձիով գնացել էր մինչև Դավրէժի «Սահմանը» ճանապարհ ձգելու այն առաջնորդին, որի դէմ իր մտքերի հաշուով թէ վատաբանել է և թէ առաջնորդի ներկայութեամբ շողոքորթել—գովել նրան։

—

Ամսոյս 27-ին վերջացան Հայկազեան գպրոցի քննութիւնները։ Ընդհանրապէս անցան բաւական յաջող, որ պարզ ապացոյց էր թէ ուսուցիչները բարեխղճութեամբ տարել են իրենց գործը, չը նայած բոլորովին աննպաստ հանգամանքների, որոնց մէջ նրանք գտնուել են, չը ստանալով համարեա ամբողջ տարուայ ընթացքում ռոճիկ և միշտ ստիպուած լինելով կռիւ մղել «աղա» հոգաբարձուների դէմ՝ իրենց իրաւունքները պաշտպանելու և իրաւացի պահանջները առաջ տանելու համար։ Ի դէպ է ասել, որ հոգաբարձութիւնը մինչև այժմ դեռ չէ վճարել Կովկասից եկած ուսուցիչների ճանապարհածախսի յաւելուածական այն 10 թումանը, որի մասին ընթերցողները արդէն գիտեն նախընթաց համարում տպած Վ. Փափազեանի յօդուածից։ Աւելին սպասելի էլ չէր մի հոգաբարձութիւնից, որի ինչ լինելը երևում է պարզ նրա անդամներից մէկի հրապարակապէս արած մի խոստովանութիւնից, «որ հոգաբարձութիւնը եթէ վճարել է ուսուցիչների ռոճիկը (այն էլ ոչ բոլորինը) մի մեծ շնորհ է արել նրանց (մ՛թէ)։» Չէ, դժբաղդ չեն ուսուցիչք, եթէ հոգաբարձուք այդպէս են։

—

«Մշակի» № 51-ում տպուած է Դավրէժի «Սէր» ընկերութեան յայտարարութիւնը, որից տեղեկանում ենք, «որ ընկերութեան գրավաճառանոցն արդէն բացված է»։ Ինչպէս յիշում են ընթերցողները այդ ընկերութիւնը մի քանի անգամ «բացել է արդէն գրավաճառանոց... լրագիրներում և ամեն անգամ էլ ստուգուել է, որ ընկերութիւնը իսկապէս բաց է արել գրավաճառանոց, միայն թղթի վրայ։ Անցեալ փորձերից իրաւունքով մենք, «բացված է» բայը փոփոխութեան ենք ենթարկում և յայտնում ընթերցողներին, որ այդ գրավաճառանոցն արդէն «բացուելու վրայ է։» Այդ աւելի ճշմարտութեան մօտ պէտք է լինի։ Երևի ընկերութիւնը առայժմ ունենալով յայտարարութիւն տալու չափ գրամագլուխ ևգիտակից լինելով այնպարզ ճշմարտութեան, որ մեր մէջ ոչ մի բան իսկոյն չէ իրագործվում, առայժմ, չը կարողանալով զսպել իր գործելուեռանդը, աւել է յայտարարութիւն, իսկ մինչև հեղինակների, հրատարակիչների հետ բանակցութեան մէջ մտնելը, պայմաններ կապելը և այլն և այլն, կանցնեն տարիներ, իսկ մինչև այդ ժամանակ «Աստուած ողորմած է»։

—

Հափտան գիւղից (Սալմաստ) գրում են. «Տեղիս ջրհորների մէջ, որոնք սովորաբար 8—10 կաց խորութիւն ունեն, ջուրը սկսեց վերջին տարիները անհամեմատ բարձրանալ. վերջին օրերում այն աստիճան բարձրացաւ, որ տների բակերը ջրով ծածկուեցին. եթէ մի քանի օր էլ շարունակուի ջրի բարձրանալը փողոցներն ևս կը ծածկուեն ջրով և տները քարուքանդ կը լինին. մի քանի օրուայ մէջ արդէն քանի՞ տներ քանդուել են։»

—

Ստացանք «Մշակի» վերջին համարների հետ և մի յայտարարութիւն Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան կողմից՝ հանգ. Նունէ Ղամբարեանի լայտնի նուիրատուութեան և նրա պայմանների մասին։ Հանգուցեալը 1891 թուին կտակել է Ներսիսեան դպրոցին 3000 ռուբլի, որպէս անձեռնմխելի գումար, որի տոկոսներից ամեն չորս տարին մի անգամ պիտի տրուի երկու մրցանակ, առաջինը մօտ 400 ռուբլի, և երկրորդը 100 ռուբլի, որպէս վարձատրութիւն՝ Կովկասի և Փոքր-Ասիայի ազգութիւնների պատմութեան, գրականութեան և աղգագրութեան մասին հայերէն լեզուով գրված ամենաընտիր աշխատութիւնների։ Մրցանակաբաշխութեան մասնակցելու իրաւունք կունենան Ներսիսեան հոգևոր դպրոցի և ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի այն բոլոր աւարտած սանները, որոնք իրանց ուսումն աւարտած կը լինեն մրցանակաբաշխութեան օրից ոչ աւելի առաջ քան 5 տարի։ Մրցանակները տրուելու են հինգ հոգուց բաղկացած մի առանձին մասնախմբից, որ ընտրելու է Ներսիսեան հոգևոր դպրանոցի ուսուցչական ընդհանուր ժողովը։ Առաջին մրցանակաբաշխութիւնը լինելու է այս տարուայ վերջին ամիսներին։

—

«Մշակը» դարձեալ սկսել է զբաղուել «Արարատ» ամսագրով. զարմանալի բան. մ՛թէ «Արարատը» գոյութիւն ունի։

—

Շնորհակալութեամբ ստացանք Բաֆֆիի «Խամսայի միլիքութիւնները» պատմական աշխատութիւնը, որ լոյս է ընծայել հեղինակի այրին երկրորդ տպագրութեամբ։ Առաջին տպագրութիւնը եղել է հեղինակի կենդանութեան ժամանակ, արտատպելով «Մշակից», որ մաս-մաս տպագրուել է առաջին անգամ։ Տպագրութիւնը մաքուր է և գեղեցիկ։ Գինը նշանակված է 1ր. 75 կ. ճանապարհածախսով 2 ռուբլի։ Հասցէն տեսնել մեր յայտարարութեան բաժնում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

—

Բաթում 20 մարտ 95

Ծովիանեանի գործարանի բանուորների մեծ մասը մշտական բանուորներ են, այսինքն այնպիսիներ, որոնք 6—7 տարիներից ի վեր այդ մի և նոյն գործարանումն են աշխատում. կան այդ բանուորների մէջ բաւական խելահաս մարդիկ, որոնք գործակատարների հետ միացած աշխատում են, որչափ հնար է, բոլոր բանուորների դրութիւնը լաւ պայմանների տակ դնել. արդէն ընտրել են մասնաժողով հաստատելու համար բանուորական փոխադարձ օգնութեան ֆոնդ, աշխատած փողի 2 տոկոսով, ցանկանումեն ունենալ բանուորական գրադարան, ունեն արդէն գործարանում փոքրիկ դեղարան, ունեն բժիշկ որի վարձը բանուորները իրանք են վճարում և Խօջամիրեանցը բանուորներին ապահովագրել է դժբաղդ դէպքերի դէմ. ուրիշ անգամ կը նկարագրեմ այդ դժբաղդ դէպքերի ինչպէս տեղի ունենալը։ Պէտք է ասած, որ Ծովիանեանները առանց տուգանք առնելու, առանց հայհոյելու աւելի են աշխատում, քան Մանթաշեանցը, թէև այս միջոցը բուրժուայի բանուորին հարստահարելու գեղաձիծաղ մի ջոցն է, ճիշտ արծաթեայ շղթայի, ոսկեայ մարակի նման է։

Ծովիանեան գործարանի գործակատարները այստեղի ինտելիգենտ ոյժի մի մասն են. դրանք են, որ աշխատանքից յետոյ իրանց ազատ ժամերը ծառայեցնում են թատրոնին, մի երկու բացառութեամբ բոլորն էլ թատրոնական սիրողներ են, ներկայացումներ են տալիս, յօգուտ ուսումնարանի, յօգուտ բարեգործական ընկերութեան, յօգուտ ուսումնարանի. վերջապէս ամեն բարեգործական նպատակների համար, մի խօսքով տեղական ազգային հիմնարկութիւններին ամենամեծ նպաստողներն են. ցաւալի է, որ այդ գործակատարների մէջ ևս կան այնպէսները, որոնք երկու երես ունեն, մի երես ընկերներին լաւ երևալու համար, մի երեսն էլ կառավարչին. կառավարչին լաւ երևալու համար, պէտք է ամեն օր չեղած բաներ հնարել միւս գործակատարների մասին և տեղեկութիւն տալ և կամ խօսք ընկած ժամանակ ասել, այսինչը լաւ չի նայում իր գործին, և Խօջամիրեանցը, ասում են, ոչ միայն լսում է դրանց, այլ այդ արարքը իր ցանկութիւնն է, ուզում է, որ ասեն, տեղեկութիւն տան իրան մինչդեռ բանբասող գործակատարները պարտաճանաչ են, աշխատում են, որչափ ոյժ ունին և կանեն ինչոր կարող են. Խօջամիրեանցը ուշադրութիւն դարձնելով մասնութիւններին, անհամ նկատողութիւններովը պակասեցնում է եռանդը այդ երիտասարդների մէջ։

Բաթումի բանուորութիւնը մեծ մասամբ Կովկասի և տաճկահայաստանի հայերից է կազմուած, որոնք հաղարներով թափվում են այստեղ աշխատելու համար, որ կարողանան մի քանի շահի փող շահել, որով կարողանան,

իրանց հեռաւոր ընտանիքի օրապահիկը հոգալ. գրանցից շատ շատերը գործարանների ծանր աշխատանքներին չը դիմանալով հիւանդանում են, եթէ կարող են տուն վերադառնալ արդէն մի քանի բուբլի էլ պարտք շալակած փախչում են, իսկ եթէ հեռու է տունը, օր. տաճկահայաստանում վայ այդպիսիների տիրոջ, այդպիսիներն էլ Սօուք-սուի թումբերն են աւելացնում ի մխիթարութիւն տեղիս յայտնի քահանաներին, որոնք թաղելու համար իրանց հասանելի փողը մեկին 3—4 առնում են, մինչև անգամ եթէ հարկ լինի բռնութեամբ։

Տեղիս հռչակաւոր տէր Կոստանդինը այժմ փաստաբանութեամբ և միջնորդութեամբ է պարապվում. մէկի համար տներ առնելու է միջնորդում, միւսի համար խանութներ, վրաց դասարների մէջ միութիւն կազմակերպեց ի վնաս տեղիս ազգաբնակութեան։ Նորերս մի ուրիշ ընկերութիւն կազմակերպելու հետ է, բայց չը կարողացայ մանրամասն տեղեկանալ թէ ինչ ընկերութիւն է, երբ տեղեկացայ կը գրեմ։

Տէր Կոստանդինին յաջողուեց տէր Յովսէփ Տէր-Պետրոսեանցին հեռացնել Բաթումից, նրա փոխարէն մի ուրիշին բերեց, որի համար ասում են Սուրենեանց եպիսկոպոսի ազգականն է։ Այսպէս առանց ժողովրդին հարցնելու, մի քահանայ բերեցին և փաթաթեցին այդ ժողովրդի վզին. ինչ հարցնել, չէ՞ որ տէր Կոստանդինը այդպէս էր ցանկանում, Սուրենեանցի էլ ազգականն է։

Առակ է, ասում են «մեր գեղի սիսեռը այստեղ լափա է դառել»։ Արսեն աբեղայ, Արսէն Երեցեան ասում էք, դրում էք, մենք էլ չենք մտածում թէ ո՞վ է. ուշ հասկացայ. դա այն Զեհունի Արսենն է, որ անցեալ տարի «Արձագանքում» բողոքում էր տէր Յովսէփի և սրբազան Սեղրակեանի դէմ, որ տէր Յովսէփը քահանայական կոչման անարժան է եղել, որ ս. Սեղրակեանը ապօրինի համախօսականով քահանայ է ձեռնադրել նրան։ Այդ թող մնայ մի կողմ, որովհետև այժմ յայտնի եղաւ, որ այդ պարո... ներողութիւն աբեղան կորկոտ ունի եղել աղալու, ինքն ուզում է եղել աբեղայ, վարդապետ լինել և այն ժամանակ կըշեռքի ծանր կողմն է հակել. բայց թող ներուի ինձ հարցնել, թէ Արսեն Զեհունին աբեղայ ձեռնադրուելիս ինչ համախօսական է ներկայացրել, ձեռնադրողները գիտէին արդեօք, որ Բաթումի կօֆէտներում առաւօտից մինչև երեկոյ թուղթ խաղալ լաւ էր իմանում. գիտէին, որ Բաթումի գործարանատէրերից մէկի մի յանձնարարութիւնը Եւրոպայում կատարելիս, այնտեղում գործարանատիրոջ անունով մի վաճառատնից վերցրած գումարի մասին, մինչև վաճառատան այդ գումարի պահանջելը գործարանատիրոջ ոչինչ չէր ասել, վերջն էլ չունէր որ առնէին, առնելու չը կարողացած փողը իրան բաշխեցին և «բարով եկար» ասին։

Հայ գործաւոր

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս «Մշակը» հաղորդում է, հայկական քննիչ յանձնաժողովի եւրոպական դելեգատները արդէն ճանապարհ ընկան դէպի Դելիիգուզան, Սասունի շրջանի գլխաւոր գիւղերից մէկը, այնտեղ տեղի վրայ քննութիւն կատարելու համար։ Մուշ վերադառնալուց յետոյ դելեգատները կը սկսեն քննել հայ վկաներին կաշառելու և վախեցնելու գործը։

—Նոյն լրագրում կարդում ենք հետևեալը։ «Լսում ենք, որ Մատթէոս պատրիարք Իզմիրլիան հեռագրով հրաժարեցրել է Մուշի ս. Կարապետ վանքի վանահայր Կարապետ վարդապետին և նրա տեղ նշանակել է մի ուրիշին։ Ինչպէս արդէն հաղորդել ենք, այդ վանահայրը, իր երկու ուրիշ ընկերների հետ միասին, գործեցին մի աննկարագրելի ստորութիւն։

—Կիրակի օր, մայիսի 7 ին. նոյն լրագրի ասելով, Էրզրումից Թիֆլիս է վերադարձել Էմիլ Դիլլօն, անգլիական «Daily Telegraph» լրագրի անվեհեր թղթակիցը։ Սրանից չորս ամիս առաջ գալով Լոնդոնից, Դիլլօն Թիֆլիսի վրայով անցաւ Էրզրում, և ամբողջ չորս ամիս է, նա թիւրքաց Հայաստանում նստած, ենթակայ ամեն տեսակ վտանգներուի, նուիրվել է հայոց հարցին, որին նա մեծ զարկ տուեց իր օրինակելի թղթակցութիւններով։ Նա ժողովել է բազմաթիւ տեղեկութիւններ և դոկումենտներ թիւրքաց-Հայաստանում տիրող կարգերի և ժողովրդի ներկայ դրութեան մասին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն. 31 մայիս (Ն. տ.) լուր է հասնում Զիադդայից, որ այդ քաղաքի շրջակայքում գտնուող բէդուինները երեկ յարձակուեցին անգլիական կոնսուլի և վիս-կոնսուլի, ռուսաց կոնսուլի և ֆրանսիական կոնսուլի քարտուղարի վրայ։ Անգլիական վիս-կոնսուլը գնդակահար մեռաւ, իսկ կոնսուլը վիրաւորուեց. ռուսաց և ֆրանսիական տէրութեան ներկայացուցիչները ևս վտանգաւոր կերպով վիրաւորուել են։

Շանխայ, 31 մայիս. Ծայրագոյն պատերազմական նաւերը ռմբակոծում են Նիւ-Լունգը։

Լոնդոն, 31 մայիս. Այստեղ մ. 1-ին հասած տեղեկագրի համեմատ տաճկական ոստիկանութիւնը խիստ դիմադրութիւն է ցոյց տուել հայկական քննիչ յանձնաժողովի օտարազգի դելեգատներին որոնք հաւաքուել էին Մուշ. չը նայելով դրանց բողոքին՝ ոստիկանութիւնը այժմ մտաւ յանձնաժողովի օտարազգի դելեգատների բնակարանը, որտեղից դուրս քշուեց մեծ դժուարութեամբ։

Կ. Պոլիս 2 յունիս. Զաւադ փաշա մեծ վեզիրը, Սայիդ փաշան և խորհուրդի փոխ նախագահը երեկ մի երկար խորհրդակցութիւն ունեցան Սուլթանի հետ կառավարութիւնների առաջարկութեամբ Հայաստանում մտցուելիք բարեփոխութիւնների մասին, որից յետոյ Սայիդ փաշան գնաց անգլիական դեսպան Սըր-Ֆիլիպպ-Քըրիին տեսնելու և նրանից խնդրեց որ խիստ չը պնդի պատասխանի համար մինչև բայրամի անցնելը. Սըր-Ֆիլիպպ-Քըրին մերժեց առաջարկը ընդունելու և ռուսական ու ֆրանսիական դեսպանների համաձայնութեամբ պնդեց տալ անմիջական պատասխան Բ. Դռնից։ Գործերի դրութիւնը ծանր կերպարանք է ստանում։—Ծայրագոյն զօրքերը փութով թողնում են Լիթունգ կղզին։

Լոնդոն. 1 յունիս. Բ. Դուռը դեռ չէ պատասխանել կառավարութիւնների տրուած հաւաքական յայտագրին, որով պահանջում է բարեկարգութիւններ մտցնել հայկական ադմինիստրացիայում։ Հաւատացնում է որ մի խիստ ճնշում պէտք է գործ դրուի մինչև տաճկական կառավարութիւնը կը զիջի կառավարութեանց պահանջներին։ Հէնց այդ նպատակով անգլիական նաւերին հրամայված է գնալ Բէյրութ. երեք պատերազմական նաւեր ևս բաժանուել են միջերկրական նաւախումբից Զիադդա գնալու, բէդուինների կատարած յայտնի յարձակման պատճառով։

Փարիզ. 1 յունիս. Հանոտոն ֆրանսիական սենատում պատասխանելով Արևելքում պատահած դէպքերի մասին եղած քննադատութիւններին, պաշտպանեց Ֆրանսիայի բռնած դիրքը՝ համաձայն գործակցութեամբ Գերմանիայի և Ռուսաստանի հետ միջամտելու ժամանակի պահանջներին. նա պաշտպանեց նաև այն դիրքը, որ Ֆրանսիան բռնել է կառավարութիւնների հետ հայկական բարեփոխութիւնների առթիւ։

Լոնդոն, 3 յունիս. Սուլթանը ցաւ է յայտնել անգլիական, ռուսական և ֆրանսական դեսպաններին այն բարբարոսութիւնների համար, որ բէդուինները կատարել են Զիադդայում և խոստացել է խիստ քննութիւն կատարել և պատժել յանցաւորներին։

Լոնդոն, 4 յունիս. Միջերկրականի 17 անգլիական նաւեր հասել են Բէյրութ։

Եոկահամա. 4 յունիս Լուր է հասնում որ ժապոնական զօրքերին յաջողուել է ցամաք դուրս գալ Կի-Լինգի մօտ Ֆորմոզայում։ Զօրքը առաջ է խաղացել և գրաւել է այդ քաղաքը խիստ կուից յետոյ, որի մէջ չինացիք յաղթուել և 400 սպանուածներ են թողել։

Լոնդոն, 5 յունիս. Բ. Դուռը երէկ պատասխանել է դեսպաններին Հայաստանում մտցնելիք բարեփոխութիւնների համար վերջինների առաջարկուած պահանջին։ Հաւատացնում են, որ պատասխանը անբաւարար է. իրերի դրութիւնը շատ ծանր կերպարանք է ստանում, որովհետև դեսպանները յայտնել են Սուլթանին, որ իրենց կառավարութիւնները ոչ մի էական փոփոխութիւն չեն ընդունի հայկական բարեփոխումների այն ծրագրի մէջ, որ խմբագրել է տէրութիւնների համաձայնութեամբ։

Հոնգ-Կոնգ 5 յունիսի. Այստեղ հասած լուրերին նայելով չինացիք ցրուում են Ֆորմոզայից ճապոնացիների մօտենալով. Փախած զինուորները օգուտ քաղելով երկրի խառնակ դրութիւնից կողոպտում ժողովրդին. Ֆորմոզայի հանրապետութիւնը լուծուել է. փոխարքայ Եանկը որ ընտրուել էր հանրապետութեան առաջին նախագահ այժմ փախստական է. մինչև այժմ ոչ մի վտանգ չէ պատահել օտարազգիներին, բայց ապահովութեան մեծ յոյս էլ չը կայ։

Ընտանավար—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ՅԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԼԻ
ՐԱՖՖԻ
„ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ“
Բ. ՏԻՊ

Գինն է 1 ր. 75 կ։ Ճանապարհածախսով՝ 2 ր.։

Դիմել՝ Тифлисъ. Аннѣ Раффи։
1—3

ՓՈՐԱՃՃՈՒԻ (որ կոչվում է ժապոնական որդ) (Solitaire Tenia) **ԴԷՄ ԽԻՍՏ ԱԶԴՈՒ ԴԵՂ.**

Փորձած «Շաւիղի» խմբագրութիւնից և զօրութիւնը երաշխաւորած։ Դեղը 3—4 ժամուայ ընթացքում ՁԳՈՒՄ է ՃՃՈՒԻ ԳԼՈՒԽԸ և լիովին ազատում նրանից։ Ոչ մի լեղիութիւն չունի. հարկաւոր չէ ոչ լուծողական և ոչ էլ ծոմապահութիւն։ Հարկաւոր եղած պատուէրները գրաւոր կերպով կուղարկվին դեղի հետ։ Դեղը փոշի է։ ԳԻՆՆ Է ՄԷԿ թուման (2 բուբլի)։ Դիմել Թէհրան, Մահտեսի Յորդանան Եղեազարեանցին. Téhéran (Perse) M. Hordanan Eliazarian։ Պատուէրները կատարվում են անմիջապէս և խնամքով։

2—3

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՐԻԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

«Հանդէսն» առաջիկայ տարին կը հրատարակուի նոյն ծաւալով աւելի ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ։ Բաժանորդագինն և այլ ամենայն պայմանք նոյն կը մնան։

Կը խնդրենք մեր բաժանորդներէն օր յառաջ նորոգել բաժանորդագրութիւնը, դիմելով մեր գործակալութեանց։ Հրատարակվում է Վիէննայում Մխիթարեան միաբանութեան խմբագրութեամբ։

Բաժանորդագին տարեկան 10 ֆրանկ

Հասցէ. Rédaction de la Revue «Hantess» Au Couvent des RR. PP. Méchitharistes à Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

3—3